

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3303

ՀՐԱԼԵՏՈՒՅՆԻՐ ՅՈՒԴՈ ԵՎԾՐԵՐԻ ՄԻՈՅԵՐԻ

ՄԻՋԱԳԻՆԻՆ

ՅԵՐԵՎԱՆԸ ՇՐԱՄԱԿԱՆ ՊՐ

ՀՐԱԼԵՏՈՒՅՆԻՐ ՅՈՒԴՈ  
Ա. Կ. Ե. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԳՐԿՈՎԿԱՆԻ  
ՅԵՐԵՎԱՆ ԿՈՎՏԻՑԵՅԱՆ

ՅԿԽՄ

Մ-73

Թ-Բ-310-1923.


ԳՐՈՂԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅՆ:

ԿՈՄԵՐԻ ՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Հ 13.

ՀԿԽՄ  
15-73

# ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՐ

2001



2010



2608  
38

Ժ. Տ. Կ. Խ. Պոլիգր. Բաժ. 4-րդ տպարան.

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԲԱՂՄՈՒՔՆԵՐԻ  
**ԾՐԱԳԻՐԸ**

Միջազգային երիտասարդական որվա և Միության առաջիկա հնգամյակի առթիվ անհրաժեշտ և առաջիկա աշնանային ամիսներին լայն աշխատանք կատարել՝ միության անդամներին միության պատմությանը և ծրագրին ծանոթացնելու նպատակով։ Այդ աշխատանքը պետք է առանձնապես կատարվի միության նոր անդամների շարքերում՝ վորոնց մեջ անհրաժեշտ և պատվաստել միության տրադիցիաները։  
Կենդրունական կոմիտեն այլ նպատակով առաջարկում է հետեւյալ մի միջոցները։

1. Միության պատմության վերաբերյալ մի շարք (առնվազն 3-4) զրույց կազմակերպել ամեն մի բջիջում՝ հետեւյալ ծրագրով։

ա. զրույց—Մուսասատանի կոմիտեի տեղական կազմակերպության պատմությունը,

բ. զրույց—Մուսասատանի կոմիտեի պատմությունը, նրա նախորդները մինչև հեղափոխությունը,

1917-18 թվերին: Առաջին Համառուսական Համագումարը:

գ. զրույց—Ծուսաստանի Կոմերիտի պատմությունը յերկրորդ համագումարից մինչև հինգերորդ համագումարը: Ճակատաներում (Փրոնտ) և գաղտնի ստորերկրյագործությունը:

դ. զրույց—Յերիտասարդական կազմակերպությունների պատմությունն Անդրկովկասում:

ե. զրույց—Յերիտասարդական Կոմմունիստական խնտերնացիոնալի պատմությունը: Արևմտյան երիտասարդության շարժումը մինչև պատերազմ և պատերազմի ժամանակ:

զ. զրույց—Յերիտասարդական Կոմմունիստական խնտերնացիոնալի պատմությունը սկսած Բերլինի կոնգրեսից մինչև Մոսկվայի կոնգրեսը: Յերկոմինտերնի դրությունը ներկայում:

Ծուսաստանի Կոմերիտի մասին խոսելիս պետք է առանձնապես ցայտուն կերպով շեշտել կուսակցության դերը յերիտասարդական շարժումն ստեղծելու գործում, նրա սերտ կապը յերիտասարդության դեռևս ձևականորեն անկուսակցական կազմակերպությունների հետ և կուսակցության զեկավարող և ուղղություն տվող դերը Ծուսաստանի Կոմերիտի պատմության բոլոր շրջաններում:

Առաջին զրույցը պետք է տարվի իրեն ներածություն զրույցների ամբողջ շարքի համար: Հինգերորդ զրույցը պետք է լուսաբանի գլխավորապես Յերկոմինտերնի ներկա դրությունը:

Հանձնարարվում է զրույցների շրջանն սկսել Ծուսաստանի Կոմերիտի (և վոչ Արևմտյան շարժման)

պատմությամբ և չճգնապել, այլ բավականանալ ամենաշատը՝ հինգ զրույցով:

Յերկոմինտերնի մասին խոսելիս հարկավոր և դիմել քարտեղի ոգնության վորագեսպի բջիջների անդամները պարզ գաղափար ստանան երկրի տեղի և դիրքի մասին:

Ցանկալի յե, վոր քարտեղի վրա նշանակված լինեն երիտասարդության կազմակերպությունները: Այդ նշանները պետք ե անեն իրենք բջիջի անդամները՝ իրեն ստուգումն նրանց յուրացրած նյութի: Այսուհետև «Կոմսոմոլյան աշխարհի քարտեղը» պետք ե ի ցույց դրվի միություննական և բանվորական ակումբներում:

II Վորովհետև բջիջային զրույցները հնարավորություն չունեն բջիջի յուրաքանչյուր անդամին մանրամասն կերպով ծանոթացնել միության պատմությանը, ուստի հանձնարավում ե, հնարավոր դեպքում, զրույցների փոխարեն կամնրանցից զատ խմբակներ կազմակերպել ակումբներին և բջիջներին կից՝ ուսումնասիրել յերիտասարդական շարժման պատմությունը: Այս վերջինի ծրագիրն ավելի ընդարձակ պետք ե լինի, քան զրույցների ծրագիրը: Նա պիտի ընդգրկի 8-10 զրույց: Խմբակներում աշխատանքը պետք ե տանեն իրենք խմբակի բոլոր անդամները սեմենարական եղանակով (տես հավելվածում խմբակների ծրագրները և բացարարական ծրագիրն ու թեման): Բացի պատմությունից խմբակները պետք ե ուսումնասիրեն և միության ծրագիրը:

Ցանկալի է կազմակերպել երկու կամ մի քանի

խմբակների ընդհանուր ժողովներ՝ լսելու և մշակելու առանձնապես հետաքրքիր հարցերը:

III Միության ակումբներում պետք է կազմակերպել երկույթերեկ երեկույթ՝ նվիրված շարժման պատմությանը։ Այդ երեկույթներից մեկը պետք է նվիրել Արևմուտքի յերիտասարդ բանվորին։ Այդ երեկույթներին պետք է հրավիրել հին կուսակցականներին, վորոնք կարող են պատմել երիտասարդ ժամանակ իրենց վարած պայքարի մասին, պետք է հրավիրել նաև կոմսոմոլի հին անդամներին, վորոնք տեղյակ են միության պատմությանը։ Յերեկույթների կազմակերպությունը ցանկալի յե հարձարարել երիտասարդական շարժմամբ զբաղվող խմբակներին։

1). Յերիտասարդական խմբակների համար զեկուցողներ ու զեկագրներ պատրաստելու նպատակով պրոպելլեկտիվը պետք է ոգոսառուց սկսած ձեռք զարկի շարժման պատմության վերաբերյալ հարցերի լուրջ մշակության։

Զբարքմունքների ծրագիրը մոտավորապես նույնը պետք է լինի նաև բջիջների համար, միայն հարցերն ավելի խորը պետք է մշակվեն, իսկ բջիջում ու խըմբակում կատարելիք զրուցի մեթոդիկան ավելի մասնամասն քննության առնվի։

Պրոպելլեկտիվը պետք է հաշվի առնի աշխատանքի ընթացքում յուրաքանչյուր զրուցի հետևանքը, վորպեսզի հնարավորություն ունենա ոգտագործել այն հետեւյալ զրուցների համար։

Այս ամբողջ աշխատանքը պետք է լինի մինչև հսկամյակի առնակատարությունը։

## ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԿՈՒՄ

Այս ծրագիրն ի նկատի ունի կոմսոմոլի սոսկ անդամներից բաղկացած խմբակներ, գլխավորապես քաղաքների գործարանային շրջաններից։

Զբարքմունքների տևողությունն է մինչև թվով մեկ ու կես ամիս, այսինքն մոտավորապես տասը դաս կամ 15 ժամ։ Փորձը ցույց է տալիս, վորուցման ժամանակամիջոցը վորքան կարճ է լինում խմբակներում, այնքան ավելի է լինում շատ կամ քիչ չափով հաջողության և հառաջադիմության հասցնելու հավանակաթյունը։

Ծրագրի հիմնական ուղենիշները կամ կետերը.

1. Յերիտասարդական շարժումն Ռուսաստանում (4 դաս):

2. Յերիտասարդական շարժումը մյուս յերկներում—Արևմուտքում և Արևելքում (4 դաս):

3. Յերիտասարդական շարժումն Անդրկովկասում։

4. Կոմսոմոլի ծրագիրը (1 դաս):

Ավել մանրամասն կերպով՝ ծրագիրը բաժանվում է հետևյալ ձևերով։

1. Յերիտասարդական շարժումն Ռուսաստանում մինչեւ 1 հաւագումարը.—Բանվոր յերիտասարդությունը և չափահաս բանվորները։ Բանվոր յերիտասարդության մասնակցությունն ընդհանուր հեղափոխական շարժման մեջ ըստ Պետքանովի։ Ուսանող երիտասարդության առաջին կազմակերպությունները.—«Հարավ»—Ռուսական միություն», «Հյուսիսային Միություն», «Կազմակերպությունը», և այլն։ Ծարժ-

ման նշանակությունը ուսանող երիտասարդության շարքերում: Կուսակցությունը և ուսանող երիտասարդության կազմակերպությունը: Բանվորական երիտասարդության առաջին կազմակերպությունները («Յուգենդ-Բունդ», «Ալպագա»): Բանվոր երիտասարդության խմբակները Պիտերում և Ուկրայնայում: Ի՞նչու մինչև վետրվարյան հեղափոխությունը չկար երիտասարդական մասսայական շարժումն: Շարժումը Պիտերում (Բանվոր յերիտասարդության կոլեկտիվները-«Աշխատանք և լույս» «Բանվոր երիտասարդության Սոցիալիստական միությունը»), ամրող կազմակերպության ձակատ մեկնելը) և Մոսկվայում («Զամոսկվեցի խմբակը և «Համամոսկովյան Միությունը»): «III Խստերնացիոնալ», սեպտեմբերի 15-ի ցույցը, մասնակցության հոկտեմբերյան կոփվերից Պրեսնյա և այլ ուայոններում, «Հետհոկտեմբերյան միությունը», կապը գավառների հետ) 1917—1918 թվերին: Շարժման 2 տիպերը: Առաջին Համառուսական Համագումարի նախապատրաստությունը և շրջանային համագումարները Պիտերում և Ուրալում: Բոլշևիկների VI համագումարը:

Իլլյուստրացիա.—Գործադուլը «Նոր-Մամարանում» և կենիդի ֆարբիակայում ըստ Պելխանովի, գործադուլն Ուկրայնայում՝ «I Ընկերության» գործարանում ըստ Մենիսկ Ռոստովի, 1902 թվի գործադուլը և ուսանող երիտասարդությունն ըստ Կրամարովի, «Փոքր-Բունդի» անշափահանների հերոսությունը. վեճեր Աշխատանք և լույս»-ում հիմնադիր ժողովին ընտրության իրավունք ունեցող տարիքի մասին, Մայիսի 1-ի ցույցը Մարսյան դաշտում:

2. Կոմսոմոլը քաղաքացիական կովում.—Առա-

ջին համագումարի նշանանկություն ու աշխատանքները: Միության և միությունական աշխատանքի աճումը քաղաքացիական կովի պայմաններում: Յերկրորդ համագումար: Վիճաբանություն յերիտարարդական շարժման ձևերի մասին: Զորահավաք Կոլչակի, Դենիկինի և Լենաստանի դեմ: Խպրոցական կոմմունիստների միությունը: Գյուլը քաղաքացիական կովի տարիներում: Կոմսոմոլը գաղտնարանում (պատպղ)-Ուկրայինայում, Դրիմում, Կովկասում, Ուրալում և Սիբիրում: Քաղաքացիական կովի բացասական ազգեցությունը մեր միության վրա:

Իլլյուստրացիա.—Առաջին համագումարի կազմը: Առաջին համագումարի պատգամավորները իլիչի մոտ ըստ Բելգիմենզկու: Միության աճման դիագրամման՝ առաջին համագումարից մինչև երրորդ համագումարը:

Հուշեր տեղական մորլիզացիայի մասին և սպանված կոմսոմլիսաների կենսազրությունը: Պիտերի յերիտասարդությունը Յուղենիչի արշավանք որերին և Պետրովարդի պաշտպանությունը: Կոմսոմոլի զրահապատ զնացքը: Մարտիկ հարյուրակներն Ուրալում: Տրիպոյյան վորերգությունը: Հուշեր գաղտնի (պոդպղ): աքիատանքի մասին:

3. Պատերազմից-խաղաղություն. — Միության աշխատանքի անկում ու նրա պատճառները: Յերրորդ համագումարը: Մեր միության կոփվը՝ բանվոր երիտասարդությանը արտադրության մեջ պահելունը՝ պատակով: Զորրորդ համագումար: Բանվոր յերիտասարդության դպրոցների աճումը: Ուկրայինյան ոպպո-վիցիան (ընդդիմադիր թէ): Ի՞նչու մեր միությունը շատ դանդաղ եր հարմարվում նոր պայմաններին:

Իլլյուստրացիա. — Կրոնշտագտի ապստամբությունը և բանվոր յերիտասարդության անկայունությունը: Բանվոր յերիտասարդության դրության դիոդրամման ըստ Ստրումիլինի զեկուցման: Աշխատանքի և պաշտպանության խորհրդի (ԸՊՕ) վորոշումը: Դպրոցների գարգագման դիագրամման 1922 և 23 թվերին: Շարաթթորյակներ:

4. Ռուսաստանի կոմմոնիստական կուսակիթյան XI համազումնարը յեվ Նրա նշանակությունը մեր միության համար. — Ռուսաստանի կոմսոմոլի մայսյան համառուսական կոնֆերենցիան: Միությունը նոր պայմաններում: Միության աճումը: Մանկական շարժումն: Ռուսական միության աղղեցությունը Արևմոտքի և Արևելքի կազմակերպությունների վրա:

Իլլյուստրացիա. — Կառավարության հետ մերձեցման շրաբթը և նրա հետեանքները: Միության կուլտուրական աշխատանքի ձևերը: Նրա համար դիոդրամման: Պատանի ռահմաքիրանները (Պիոներ) և Սպարտակները, ընկ. Շացկինի առաջն մեկնումը Բերլին 1919 թ. Ա. Դալլինի մեկնումը Զինաստան: Վիճաբանություն կոմսոմոլի և կոնդրեսների տեղի մասին 1921 թվին:

Ժանոթություն. Շարժումն Ռուսաստանում կետի մասին. — Անհրաժեշտ և ձգտել վորքան կարելի և շատ իլլյուստրացիա տալ տեղական կազմակերպության կյանքից՝ հյուսելով տեղական կազմակերպության պատմությունը համառուսական երիտասարդական շարժման հետ:

Տեղական կազմակերպության պատմությունը: Բանվոր յերիտասարդության խմբակները մինչև հեղափոխություն: Ռւսանող յերիտասարդության կազմակեր-

պությունը փետրվարից մինչև հոկտեմբեր: Խնչվես առաջ յեկավ Խուսաստանի կոմսոմոլի կազմակերպությունը: Մոբիլացիա: Դաղտնի աշխատանք: Դպրոցների աճումը և հիմնական տնտեսական նվաճումները:

5. Յերիտասարդական շարժման սկիզբը Արեվմուտքում: — Շարժման 2 տիպերը: Բեղդիա և Գերմանիա կամ Ավստրիա: Հակամիլիտարիստական պրոպագանդա: Բանվոր յերիտասարդության դրությունը և կրիվ գործատերների դեմ: Յերը և ինչպիս առաջ յեկավ ինքնուրույն երիտասարդական շարժումն:

Իլլյուստրացիա. — ըստ Զիչերինի:

6. Շտուտգարդի 1907 թվի կոնգրեսը և նրա վորոշումները: Կոիվ հանուն ինքնուրույնության գերմանիայում: Կուսակցությունը, պրոֆմիությունները և երիտասարդության կազմակերպությունները: Յերիտասարդությունը 1914—18 թվերի պատերազմում: Կարլ Լիբկնեխտը և նրա դերը միջազգային յերիտասարդական շարժման մեջ: 1915 թվի կոնգրեսը և միջազգային յերիտասարդության որը: Հոկտեմբերյան հեղափոխությունը և Արևմուտքի յերիտասարդությունը:

Իլլյուստրացիա. — ըստ Մյուցցենբերգի և Զինովիևի:

Բերլին 1919 թվի կոնգրեսը: Յերիտասարդության կազմակերպության նշանակությունը III Խնտերնացիոնալի առաջնալու նկատմամբ: Շարժման բնություն Արևմուտքում առանձին յերկրների որինակներով: Յերիտասարդության կոմինտերնի յերկրորդ կոնգրեսը և նրա «մասսաների մեջ» լողունգը: Խնչու կազմակերպություններն Արևմուտքում մասսայական չեն և ինչպիս են դաշնալու մասսայական: Բջիջային կառուց-

վածքը և տնտեսական կուլի նշանակությունը: «Մասսաների մեջ» լոգունգի խորացումը յերբող կոնգրեսում. միասնական ճակատը և նրա բացատրությունը: Շարժումն Արևելքում:

### Իլլյուստրացիա.—

Բանվոր յերիտասարդության դրությունն Արեվմուտքում:—Բանվորական որը, դպրոց, աշխատավարձ և այլն: Տնտեսական կուլի: Մեր հակաբակորդները—յերիտասարդության բուրժուական ու սոցյալ-դեմոկրատական կազմակերպությունները: Կուլի ֆաշիզմի գեմ: Միությունն ու կուսակցությունն Արևմուտքում Նորվեգիայի և այլ երկրների որինակով: Ազգային մոմենտն Արևելքի շարժման մեջ: Միջազգային երիտասարդական շարժումը և Ռուսական միության խնդիրները:

Իլլյուստրացիա.—Բանվոր երիտասարդության դրության մասին ըստ Շելլերի:

9. Յերիտասարդական շարժումն Անդրկովկասում: Կազմակերպության ծնունդն՝ իբրև յերիտասարդ ինտերնացիոնալիստների միություն:

Թիֆլիսի առաջին կոնֆերենցիան 1918 թվի ըսկըին, վորի ընդունած գեկլարացիայի համաձայն մեր միությունն սկսվեց կոչվել կոմմունիստական:

Ժամանակավոր, կենդրոնական կոմիտեի ժամանակաշրջանը: Յերիտասարդական կազմակերպության I Անդրկովկասյան համագումարը: Միմիայն Ռուս-Յերկոմմի հետ:

Շրջանային բյուրոների ժամանակաշրջանը Բաքվում (Ադրբեջան) և Թիֆլիսում (Վրաստան և Հայաստան):

Որինականություն (լեզուիզացիա) ժամանակաշրջանը (և «Յերիտասարդ պրոլետար» թերթը): Յերկրորդ Անդրկովկասյան համագումարը: Ժանոթություն. Առանձնապես մանրամասն անցնել տեղական կազմակերպության պատմությունը՝ լայն կերպով ոգտագործրով հին կոմսոմոլիստների անձնական հիշողությունները:

Նյութեր—«Սպարտակ» ժողովածուն՝ հրատարակություն Ռուսաստանի կոմերիտի Անդրկովկասյան Յերկրային կոմիտեի: „Քրանք Ետքուն”-ի և մյուս կոմսոմոլիստական թերթերի հոդվածները:

10. Կոմմոնդիլի ծրագիրը. Ի՞նչու համար ե բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը կարիք զգում ինքնուրույն յերիտասարդական կազմակերպությունների: Ի՞նչու ե մեր միությունը կոչվում Յերիտասարդական Կոմմոնդիստական Միություն և վոչ թե կոմմոնդիստական Յերիտասարդության Միություն: Շարժման մասսայական բնույթը: Ռուսաստանի Յերկոմմին բանվորա-գյուղացիական յերիտասարդության միակ մասսայական կազմակերպությունն ե: Յերիտասարդության կարիքների համառուսական ընդգրկումն: Միությունական աշխատանքի ճյուղերը, տնտեսական, բանվոր յերիտասարդության կրթությունը, մասնակցությունը սոցիալիստական շինարարության մեջ, հանրապետության պաշտպանությունը և կարմիր զինվորների պատրաստումն, Փիզիքական զարգացումն, կոմմոնդիստական կրթություն և դաստիարակություն: Կազմակերպչական դաստիարակություն: Մեր և կուսակցության փոխարարերությունները: Վ. Ի. Լենինը

և Ն. Ի. Բուխարինը յերիտասարդության միության խնդիրների դաստիարակչական աշխատանքի մասին։ Կոմսոմոլիստի պարտականությունները։

Իլլյուստրացիաները պետք են վերցնել անհրաժեշտորեն տեղական կազմակերպության 2-3 բջիջների կյանքից։

## ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՐ

Կ Ա Զ Մ Ե Ց

Յ. Ա Զ Ն Ա Վ Ո Ւ Ր Յ Ա Ն

Պըսկար երիտասարդում  
թյունը հանդիսանում է ազագո  
ղերմանական և համաշխարհային  
հեղափոխության ամենասուրբ և  
անհանդչելի հուրը:

Ա. Արքանեած.


## ՀԱՄԱՅՆԱՐԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

«Պատերազմն աստծու չարիքը չե, ինչպես  
կարծում են աերակերները, նա կապիտալիստա-  
կան հասարակարգի զարգացման վորոշ աստի-  
ճանն ե, և նույնքան բնական ե ու բարոյական  
վորքան՝ խաղաղությունը»... Այսպես և ասել  
րնկ. Լենինը համաշխարհային պատերազմի սկզբին:

Ցեղ իսկապես, 1914 թվին սկսվող համաշ-  
խարհային պատերազմն այնքան ել անսպասելի  
մի զիսլվածք չեր, այդ պատերազմն սպասվում  
եր վաղուց, և նախ քան սկսվելը խոսվում եր  
որա մասին:

— Ի՞նչ ե պատերազմը:

— Պատերազմը կապիտալիստական աշխարհի  
որդյունաբերական ու քաղաքացիական արտո-  
ւարդ միջոցն եւ:



կապիտալիստական աշխարհն ստեղծել եր տեխնիքական հսկայական ույժ, ստեղծվել ելին մեծ քանակությամբ արդյունաբերական տրեստներ և բանկերի միություններ: Յերկրի ներքին շուրջան այնքան չեր սպառում վորքան արտադրում եր արդյունաբերությունը, և նոր ոգուտի, հավելյալ արժեք ստանալու համար կապիտալիստներն այնքան ել նապատափոր պայմանն է չունելին:

Յերկրի ներսում չսպառվող ապրանքի կուտակումը, անպայման վաղ թե ուշ առաջ եր բերելու արդյունաբերական կրիզիս, վորն այս բան ել հաճելի չեր կապիտալիստների հաստքան գրպաններին: Ուրեմն, կապիտալիստներին մնում գրպաններին: Ուրեմն, կապիտալիստների մի ճանապարհ զինվել, պատրաստվել նոր պատերազմի, ոգուտի նորմանոր աղբյուրներ-զաղութներ ու շուկաներ ձեռք բերելու համար:

Պատերազմի հիմնական շարժառիթն եր կովկել ամբողջ աշխարհին իշխելու համար: Բուրկովիսն պատրաստվում եր ուժգին, նու տարրից տարի սպառազինում եր իր բանակը, կրկնարատկում գորքերի թիվը, և պատերազմական բնորդարութիւնների համար շարժառիթներ վիճուռում: Իուրի շուտական գիտության ամենալավ ուժերը աշխատում ելին մարդկանց կոտորելու նորանոր միջոցներ գտնել, հնարում ելին, զանազան

հեղձուցիչ գագեր, նոր սիստեմի թնդանոթներ և այլն: Նավատորմիղը բազմապատկվել եր ու զարգացել: Իկա ցարական ու թագավորական դինաստիաները, իրենց երկրի կապիտալիստներից գագուված իրենց հերթին նրանք ել պատրաստվում ելին կովի: Զե վոր պատերազմը միակ և ամենալավ միջոցն եր ճնորին վողորմածության» յերկրի սահմաններն ընդարձակելու համար:

Մյուս կողմից նրան պատրաստվում ելին զիմավորել և բանվոր դասակարգի լավագույն տուաշնորդները: Միջազգային կոնդրեսներում լուրջքնության եր առնվում պատերազմի հարցը: — Ի՞նչպես պետք ե վարվեյին սոցիալիստները պատերազմի ժամանակ:

1912 թ. բարկանյան պատերազմի ժամանակ, Բագելում կայացավ Ա-րդ ինտերնացիոնայի միջազգային համագումարը: Կոնդրեսը պարզ տեսնում եր, վոր պատերազմն սպառնում է համաշխարհային բնույթի ստանալ, վորովհեակ բարկանյան կոխվը շոշափում եր մեծ բոնականների շահերը:

Կոնդրեսի վորոշման մեջ ասլում ե. «Թող շմուռանն կապիտալիստական կառավարությունները, վոր ֆրանս-պլուսական պատերազմը ծնունդ գարձավ հեղափոխական կոմմունային,

սուս-յատընականը՝ լարվածության հասցրեց հեղափոխական շարժումները Ռուսաստանում։ Պրուիտարները կապիտալիստների շահերի պինաստիաների խանդի, և դիալոմատիկական խաղերի համար միմիանց կոտորելը ամոթալի բան էն համարում։

Դեռ հիշած կոնգրեսից 5 տարի առաջ 1907 թ. Շտուրգարդում Ա-րդ ինտերնացիոնալի կոնգրեսին քննության առնվեց պատերազմի հարցը։

Համագումարն ընդունեց մի բանաձև վորի մեջ շեշտավում և վոր. «Եթե կապիտալիստական պառավագրություններն սկսեն պատերազմել, սոցիալիստներն ամեն կերպ աշխատելու են լիկ վիազգիայի յենթարկել նրան, և նրա պատճառով սաեղծված համաշխարհային անտեսական և քաղաքական կրիզիսը ոգտագործել վորպեսզի ապատամբեցնեն ժողովրդին և այսպիսով արագացնեն կապիտալիստական հասակարգի անկումը»...

Այս վորոշումն ամեն պարզ ընդգում և այն ինչ վոր պիտի անելին սոցիալիստները պատերազմի ժամանակ, նրանք պետք են այդ պատերազմն ուղղելին նրանց դեմ, ովքեր բարբորել ելին նրան, և գարձնելին այդ պատերազմն համաշխարհային պրոլետարական հեղափոխության սկիզբը։

Սյսպես եր մոտավոր գրությունը մինչեւ համաշխարհային պատերազմը։

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Պատերազմն սկսվեց։

1914 թ. հուլիսին արդեն սկսվեցին ընդհարումներ սահմանապահ զորքերի միջև։

Պատերազմելու հարցը գրվեց բոլոր երկրների պարլամենտներում։ և Ա-րդ ինտերնացիոնալի ղեկավար այն սոցիալիստները, վորոնք Շառադարդում ու Բազելում գետ ելին խոսում պատերազմին—ձայն տվին նրա սկսելու ոգտին։ Ամենաուժեղ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը - գերմանականը վոր ռայխստագում (պարլամենտ) ուներ 110 պատգամավոր. ձայն տվեց պատերազմելու ոգտին։ Ռուսաստանում պատերազմական ապառիկների քըննության ժողովից բողոքելով հեռացած 5 բոլշևիկ պատգամավորները ձերբակալվեցին և ուղարկվեցին Սիբիր։

Բուրժուազիան ամենուրեք աշխատեց նախորդ հրապարակից հեռացնել նրան, ով համարձակվում եր պարզ խոսել պատերազմի եռության մասին։

Այսպիսով իր թիկունքն ամրացնելով—հաղթական բուրժուազիան սկսեց կռիվը։ Ել ի՞նչից

Եր վախենում վոր - սոցիալիստները վոչ միայն չեյին խանգարում, այլ բանվորներին քարոզում եյին երթալ, կովել բուրժուազիայի ողափին, դե ել մվ կարող եր բանվորական խավերում պատերազմի բուն պատճառների մասին խօսել, կամ պարզել, յերբ նրանց ղեկավարները ոգնության ձեռք եյին մեկնել իրեն:

1914 թ. ոգոստոսին դեպի խրամատներն հոսեց միլլիոնավոր բանվորների և զյուղացիների լավան, տանելով իր հոգում խորին տաելություն դեպի հարեւան երկրի բանվորն ու զյուղացին:

Կապիտալիստական պետությունների բանակով առարկեցին վոչ միայն բանվորներն ու զյուղացիները, այլ սոցիալիստական կազմակերպությունները:

Ամբողջ Եվրոպան մի գժատուն եր դառել. դիրքերով ու յերկաթալարերի ցանցերով շրջապատված երկրներն իրարից բաժանվում եյին կենդանի մարդկանց շղթաներով: Մի խելագար սպանդանոց եր ուր վոչ չափ կար, վոչ սահման, և վորին մասնակցում եյին մոտ 60 միլլիոն մարդիկ: Ապա պատերազմով երկրների ներքին կրանքը — դա իրենից մի պատերազմական լազեր եր ներկայացնում, ամեն, ամեն բան տրվում եր անխնա կործանարար պատերազմին. — դործարանները զավոզները միշտ ու անխոնչ դիշեր

ցերեկ հրագեններ եյին պատրաստում: Վոչ մի բան աչքից չեր վրիպում: Եվ այս բոլորը գալիս են մեզ ասելու վոր պատերազմին միայն վաթուուն միլլիոն մարդիկ չեյին մասնակցում, այլ հարյուրավոր միլիոններով: Յուրաքանչյուր ընտանիքի ամենաուժեղ և առողջ անդամը գտընվում եր պատերազմի դաշտում:

Պատերազմը միշտ նորանոր միջոցներ եր պահանջում, իսկ դրանք կարող եյին տալ միմիայն բանվորները: Զե վոր պատերազմելող կապիտալիստները միայն հարեւանի երկրին տիրելու և նրա ունեցածը հափշտակելու նպատակ չունեյին: այլ նրանք ուղղում եյին թալանել և բենց ժողովրդին. ու թալանեցին, պատերազմական առուծախով ու փոխառությունների պատճառով կապիտալիստների ու բանկիրների գրրպանները հաստացն:

Մանր բուրժուազիան քայլայվեց, բարդվեցին նրանոր նալողներ, կյանքը թանգացավ և անտանելի դարձավ բանվոր դասակարգին:

Եյս բոլոր ժամանակամիջոցում բուրժուական լրագրները, ժուրնալներն ու պարբերականները զրում, տպում եյին հայրենասիրական կոչեր, վոտանավորներ և կաշվից դուրս գալով աշխատում եյին ամեն կերպ ստեղծված շոլինիու-

տական դրությունը իր լարվածության մեջ պահել:

Իսկ ֆրոնտներում, մարդկանց կենդանի շրթաները գնդակների մահաբեր սուլոցի ու հրազենների վորոտի տակ, շարժվում եյլն մեկ առաջ մեկ ետ, հոշոտելով միմիանց շարքերից հարյուր հազարներով:

Բանվորներն ու զյուղացիները զնում եյլն պատերազմի դաշտում մեանելու—իրենց բոլորովին հակառակ—բուրժուազիայի շահերի և ողուախ համար:

Յեվ վոչ վոք չեր հարցնում, չեր բողոքում այս երեսոյթի դեմ:

## ՈՂՊՈՐՏՅՈՒՆԻՉԱՄ ԵՒ Խ-ՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Բայց այդ ինչպես եղավ, վոր սոցիալիստական կուսակցությունների պարագլուխները, վորոնք ուզում եյլն բուրժուազիայի սկսած պատերազմը պրոլետարական համաշխարհային հեղափոխության սկիզբ դարձնել, վոչ միայն չաշխատեցին այս ուղղությամբ, այլ ոգնեցին իրենց բուրժուական կառավարություններին:

— Անտ թե ինչու ամեն բան այդպես դաստիարկեց:

Դեռ պատերազմի նախորյակին, բանվոր

երիտասարդության ավելի գիտակից մասը զգաց, վոր բանվոր դասակարգը կորցնում և իր պայքարելու լնդունակությունը: Ոպպորտյունիզմը վորը բուն եր զրել սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեջ, զարգացավ: Կամաց-կամաց կուսակցության և պրոֆմիությունների դեկավար որգաններն անցան ողպորտյունիստների կամ նրանց կողմանակիցների ձեռքը:

Ոպպորտյունիզմի ծնվելու բան պատճառը համարվում է բանվոր դասակարգի մինչև պատերազմն ունեցած դանդաղ պայքարը, և պարլամենտական ճանապարհներով ձեռք բերած փոքրիկ բարենորոգությունները: Իսկապես, ոպպորտյունիզմ—փոքրիկ բարենորոգությունների համար պայքարելու հիվանդություն կարելի և համարել:

Ուրիշ և բանվոր դասակարգի պահանջը, նա երբեք չի կարող հաշավել բուրժուազիայի հետ, իսկ ոպպորտյունիզմը—ուզում և համաձայնության ճանապարհ հարթել:

Ոպպորտյունիստ լինել, նշանակում և հրաժարվել պրոլետարական պայքարի վերջնական նպատակից—պրոլետարական հեղափոխությունից և դավանել կապիտալիզմի աիրազետության շրջանում կրիայի քայլերով զարգացող սոցիալիզմը:

Այս հիվանդությունն իր ժամանակին հրապարակ համեցին բանվոր դասակարգի լավագույն առաջնորդները և սկսեցին բուժել: Սկսվեց ուժեղ կոխվ ոպղորայունիսաների դեմ: Բայց նա խոր արմատներ եր ձգել բանվորական խավերում, և ոպղորայունիզմի—բուժուազի այլ հետ հաշտվելու վորով դաստիարակիւց մի ամբողջ պրոլետարական սերունդ: Ոպղորայունիզմի առաջավոր մասը պայքարում եր կոտակցությունների և պրոֆմիությունների փարիչների դեմ: Նա առանձնապես խոր արմատ ձգեց այն կազմակերպությունների մեջ վորոնց զեկավարում եր Ա-րդ ինտերնացիոնալը:

Պատերազմի ժամանակ ոպղորայունիսաները ուղղակի հանցան բուրժուազիայի կողմը, սկսեցին քարոզել ու պաշտպանել նրա հորինած «ազգային» ու «ուրբագան հայրենիք» լոգունզները:

Բուրժուազիային հաջողքեց ենթարկել իրեն այն—վորի համար տասնեակ տարիներ կովել եր բանվոր դասակարգը՝ բանվորական կազմակերպություններն ու կուսակցությունները: Սոցիալ գեմուլրատական առաջնորդները բանվորական լայն խավերում բուրժուական ազգեցության տարածողները դարձան ու պաշտպանեցին նրան:

Թե չե, քանի զլուխ ուներ բուրժուազիան, կամ նրա իմպերիալիստական կառավարությունը:

Վոր կարողանար պատերազմ սկսել, եթե չկիտենար վոր սոցիալ-դեմուլրատների լիակատար աջակցությանն ե վայելելու:

Բանվոր դասակարգը պատերազմի համար կենդանի ուժի ամենամեծ աղբյուրն եր, նա կարող եր վերջ տաղ պատերազմին և միենոյն ժամանակ՝ ապահովել պատերազմական ապարատի ամբողջությունը: Նա այն պատերազմական գործիքն եր վորի վրա եր կենդրոնանում պատերազմող կապիտալիստական պետությունների ուշազրությունը:

Բուրժուազիան արդեն կատարելագործել եր եր զինվորական և պատերազմական տեխնիկայի միջոցները, ժանդարմների ու վոստիկանության միջոցով նա հեղդում եր հեղափոխական շարժումները: Պատերազմն սկսելու համար նրան մնում եր անել մի բան—ստեղծել հասարակական կարծիք բանվորական լայն խավերում, և այդ միջոցով տիրապետել պատերազմական ամենալավ ապարատի: Յեկ շնորհիվ սոցիալ-դավաճանների նա իր երկաթի ճիրաններում պահեց բանվոր դասակարգի ամենագործոն մասին:

Ա-րդ ինտերնացիոնալի զեկավարներից շատ շատերը դարձան իմպերիալիստական կառավարությունների մինիստրներ, վորպես որինակ

արիրահնչակ վաճառքերվելուն, գեղը և գենդերը սոնը:

Բուրժուազիայի դեմ մղվող կովի ամենաշահայուն և հին առաջնորդները — վորպիսիք են կառւցկի և Պլեխանով — դավաճանեցին նրան:

Պատերազմը վոչ միայն կապիտալիստական աշխարհի այլ սոցիալիզմի կրիզիսի նշանն էր:

Ա-դ ինտերնացիոնալը քայլայվեց, պատերազմի հարցը նրա համար տարածայնությունների և բաժան-բաժան լինելու հարցը դարձավ: Կազմվեցին պատերազմի կողմնակիցների և հակառակների խմբակները: Բացի ուղղակի կողմնակից և դեմ եղողներից, կազմվեց մի երրորդ-միջն ճանապարհ բոնողների խմբակ կառւցկու զիսավորությամբ, վոր խաղաց ամենասոտոր շարեյկրելու դերը:

Խոսքով պատերազմին դեմ լինելով, նու «մարքսիստական» ֆրազներով աշխատում եր համոզել բանվորության վոր պատերազմն անխուսափելի ե — հետեւաբար պետք ե շարունակվի նա, և այն: Երկար ժամանակ նա խարեց բանվորության մինչև վերջնականապես զլորվեց բուրժուատական ճահճը:

Սյապես բանվորական կազմակերպությունները զեկավարվելով սոցիալ գավաճաններով և ոպպորտյունիստներով նետվեցին կովի դաշտ

միմիանց հոշոտելու համար: Եվ վոչ-վոք պատերազմից առաջ չեր կարծում, վոր սպազորայունիդմը, այդպես զգալի և խոր թունավորված լինի բանվոր դասակարգի որգանիզմը:

### ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՈՊՊՈՐՏՅՈՒՆԻՃՄ.

Կովել բուրժուազիայի «աազմատենչության» դեմ, և դաստիարակվել սոցիալիստական վոզով այս եր բանվոր երիտասարդության հերթական խնդիրներից ամենաառաջինը, վոր զործադրվեց կյանքում:

Հակամիլիտարիստական շարժումն ու վոզին ավելի ուժեղ եր, և դասակարգային կովի զաղափարը ավելի վառ բանվոր երիտասարդության շարժքերում:

Պատերազմների դեմ պայքարելու սկզբունքը կապիտալիստական բոլոր երկրների բանվոր երիտասարդության շրջանում մեծ հաջողություն գտավ: Առանձնապես ուժեղ հակամիլիտարիստական աշխատանքներ սկսվեցին Շտուտգարդի կոնցրեսից հետո:

Բայց դասակարգային զիտակըությամբ զինված և խնդրավատան պայքարողների զորոց հանդիսացող բանվոր երիտասարդական կազմակեր-

պությունները վաղ թե ուշ, պետք է զբավելին սոցիալ-դեմոկրատների և պրոֆմիությունների ուշագրությունը, վորոնք զեկավարվում ելին ուղղությունիստների կողմնակիցներով։

Ոպպորտյունիզմն սկսեց թեև զանդաղ, բայց զգալի կերպով իր գործը տեսնել: Յեվ համաշխարհային պատերազմի նախորյակին Ա-րդ ինտերնացիոնալին ենթարկվող բոլոր երկրների յերիտասարդական կազմակերպություններն անցան ոպպորտյունիստ սոցիալ-դեմոկրատների ձեռքը։

Գերմանիայում ուժեղ կոիվ սկսվեց երիտասարդական անկախ կազմակերպությունների գեմ։ Այդ արշավանքի գլուխն անցավ Ա-րդ ինտերնացիոնալի պարագլուխներից մեկը՝ գերմանական պրոֆմիությունների առաջնորդ հայտնի սոցիալ-դավաճան Լեգինը։

Սոցիալ-դավաճաններին ողնության ձեռք մեկնեց բուրժուական կառավարությունը վորին նույնպես ձեռնառու չելին երիտասարդական անկախ սոցիալիստական միությունները։ Նա պրոֆմիությունների ու սոցիալ-դեմոկրատների կովին նպաստեց հրատարակելով առանձին որենք երիտասարդական անկախ կազմակերպությունների գեմ։

Պատերազմից արդեն մի քանի տարի առաջ

երիտասարդական անկախ կազմակերպությունները փոխնչացան։ Դեղին առաջնորդներին վերջնականապես հաջողվեց համանել իրենց նպատակին, նրանք երիտասարդական կազմակերպություններից զեկավարությունը հանձնեցին իրենց մարդկանց կամ ինչպես հետո կոչվեցին—իրենց «վարձկաններին»։

Յերիտասարդական անկախ կազմակերպություններն ջախջախվեցին, և նրանց ներքին կյանքը բոլորովին փոխվեց։ Հսումն՝ աշխատանքներն հանդիսանում ելին վորպես բացարձակ հակամիլիտարիստական պրոպագանդա, և քաղաքական աշխարհին ակտիվ մասնակցություն։ Ոեփորմիսանները անամոթարար սրանց փոխարինեցին բուրժուական «կուլտուրական» աշխատանքների, կենդրուացնելով բանվոր երիտասարդության ուշագրությունը խաղերի և զվարձության մեջ։ Վաշնչացավ և երիտասարդության անտեսական պայմանագրությունը արտօնությունը և դերը։

Բոլոր երկրների ոեփորմիսանները միշտ ատել են, և ատում են բանվոր երիտասարդության անկախ կազմակերպությունները։

Սկսվեց մի սոսկալի արշավանք երիտասարդական ոպպորտյունին խմբակների գեմ, վորոնք իրենց անկախ կազմակերպությունն ելին պա-

հանջում։ Բայց այդ հալածանքը չողնեց։ ոպարիցիսն խմբակները հետդիետե բազմանում ենին։

## ԲԱՆՎՈՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄ

